




Տպարանս փոխադրուած է Պապը ալի
նատտէսի թիւ 38, Իգտամ՝ լրագրին դէմ:



ապագայ գահաժառանգին: Էտուար Է. իր անդրադ ժամանակները մտաւոր բարձր դաստիարակութեան նուիրած էր: սքանչելի կերպով ֆրանսերէն ու գերմաներէն գիտեր և Էտինպուրկի, Օքսֆորտի եւ Քէմպրիճի համալսարաններու դասընթացներուն հետեւած էր:

1861ին հօրը մահուամբ նոր բայց ձանձ-

մին ինք չկը հանդիսապետէր, ժողովներու կը նախագահէր, եւրոպական արքունիքներու մէջ գահակալութիւններու, հարսանիքներու, յուղարկաւորութիւններու միջոցին Անգլիական ազգը կը ներկայացնէր:

Երկու անգամ Անգլիայէն դուրս ելաւ, 1860ին Գանատա գնաց եւ 15 տարի վերջն ալ Հնդկաստան այցելեց: Այս ճամբորդու-



Ն. Վ. ԷՏՈՒԱՐՏ Է.

րացուցիչ զբաղում մը բացուեցաւ իրեն. Վիքթորիա Թագուհին՝ սիրական ամուսինին կորուստէն անմխիթար, այլ եւս հրապարակաւ խրախճանութիւններու մէջ չերեցաւ. իրեն տեղը ներկայացուցիչ կը զրկէր Կալլէսի իշխանը՝ որ պաշտօնական հացկերոյթներու, պարահանդէսներու ներկայ կը գրտնուէր, պալատական ներկայացումները ինք կատարէր, արձաններու, շէնքերու բացու-

թիւններու միջոցին անցաւ Շիքսհիօէ, Վալինկթըն եւ Նիւ-Եօրքէ՝ ծպտեալ:

* *


Մինչդեռ Կալլէսի իշխանը արտաքին, ընկերական կեանքով դուրսերը կ'իյնայ, իր կինը՝ սիրալիւր՝ կը փակուի ընտանեկան շրջանակին մէջ: Տանըմարքայի Քրիստիան Թագաւորին դուստրը Ալեքսանտրա իշխա-

նուէին, առաջին անգամ Ուորմսի մայր եկեղեցիին մէջ հանդիպեցաւ իր ապագայ ամուսնոյն, Իշխանը, հազիւ 22 տարեկան, սիրահարեցաւ և Պրիւքսէլի արքունիքին մէջ պաշտօնապէս ներկայացաւ անոր. ամուսնութիւնը տեղի ունեցաւ Ուինսորի դղեակին Ս. Գէորգ մատուռին մէջ:

Քրիստիան թագաւորին անձնական հա-

անցնելու չափ չքեղ եղած է. եւ անկէ ետքը ոչ անգլիական ազգին, ոչ ալ արքունիքին սէրն ու համակրութիւնը դադրած է իր վրայէն: Երբ 1876ին ծանր հիւանդութենէ մը բռնուեցաւ, ամէն օր ահաւի՛ն բաղձութիւն մը պատուհանին տակ անձկազին նոր լուրի մը կ'սպասէր:

Արդի Անգլիոյ թագուհին իր կրթու-



Ն. Վ. ԱՆԵՐՍՏՐԱ ՔԱՆՈՒՆԻ

րստութիւնը մեծ բան մը չըլլալուն, Դանիական ազգը ուզեց ինք տալ իր իշխանուհիին օժիտը. հանգանակութիւն մը բացուելով՝ մէկ երկու օրուան մէջ ահագին գումար մը կաղմուեցաւ:

Գործով այս ցոյցէն զգածեալ, Իշխանուհին՝ ինքն ալ իր ամուսնութեան օրը հարս եղող վեց աղքատիկ աղջիկներուն օժիտը նուիրեց: Խօսեցեալ Իշխանուհիին Անգլիա անցնելը եւ Լոնտոն մտնելը՝ առակի կորգ

թիւնը Քօքէնհալի մէջ տաւած է, անանկ տեն մը որ իշխանութեան գլուխը չէր գտնուէր. այն ատեն պարզ ու եռանդուն երիտասարդութիւն մը ունեցաւ. նոյն իսկ ըսողներ կան թէ ինք՝ իր քրոջ՝ Ռուսիոյ Մայր Կայսրուհիին հետ՝ չըջադուտներն ձեռնալին կը պատրաստէին. եթէ բաղձին բերմաքով՝ այսօր Անգլիոյ զահուն վրայ բարձրացած տեսաւ ինքզինքը՝ բնաւ չհպարտացաւ ասով եւ իր սպա-

կենցաղը միշտ պահեց արքայական ճոխութիւններուն մէջ:

* *

« Ամէնէն թշուառ մարդը կ'ըլլամ երբ ակոստ կը ցաւի եւ այդ միջոցին պէտք կ'ըլլայ ընկերական հաւաքոյթի մը ներկայ ըլլալ: ուր ժպտուն երես երեւնալու է: »

Անգլիոյ թագաւորը պաշտօնական շրջանակներէ դուրս շատ պարզասէր է. պըզտիկ ճամբորդութիւնները գրեթէ միշտ ծրարեալ կը կատարէ. ամէնէն շատ Չէսթըրի կոմս անունին տակ կը պահէ Կալլէսի իշխան տիտղոսը:

Քայած ժամանակ ամէնակատարեալ աշխարհիկ երիտասարդի մը տիպարը կը ներկայացնէ: Խօսակցութեան ժամանակ դիւրաւ կը մոռնայ վեհափառ մը ըլլալը. բայց միշտ կ'ուզէ որ դիմացինը յիշէ թէ ինք վեհապետ մըն է:

Պատիկ անեկդոտ մը որ 11 տարիի չափ առաջ տեղի ունեցած է:

Օր մը իշխանը՝ բարձր անձնագործեան մը հետ Վիքթորիա թագուհիին այցելութենէ մը կը դառնար քայելով: Օգը շատ ցուրտ ըլլալուն՝ իշխանը ընկերոջը առաջարկեց տաք տաք խաշած գետնախնձորներ գնել եւ ձեռքերնուն մէջ բռնելով մատներնին տաքցնել: Լոնտոնի մէջ ամէն փողոցի անկիւնը խաշած գետնախնձոր ծախողներ կան, ինչպէս որ Պոլսոյ մէջ խորոված շագանակ կը ծախեն: Իշխանը խեղճուկ խանութի մը առջեւ կանգ առաւ եւ երկու տաք գետնախնձոր ուզեց. ընկերն ալ երկու հատ առաւ եւ դրամը վճարելով ու խնդալով մեկնեցան: Չարաճճի խանութպանը ճանչցաւ իր յաճախորդները. բայց ձայն չհանեց: Երկու օր ետքը խեղճուկ խանութին վրայ՝ ոսկեզօծ տառերով եւ անգլիական զինանշանով զարդարուն տախտակ մը դրած էր, սա վերտառութեամբ

BY APPOINTMENT TO THE PRINCE
OF WALES

(Հայրապիշ Կալլէսի Իշխանին)

Կալլէսի իշխանին կեանքը քանի մը անգամներ մեծ վտանգներէ ազատուած է. առանց խօսելու իր վերջին հիւանդութեան վրայ: Յիշենք 1898ին Ռօչիլտի ընտանիքին

մէկ անդամին տուած այցելութեան միջոցին ծունգը կոտորիլը: 1871ին գրեթէ մահուան դուռը հասաւ ժամտատենդի հարուածներուն տակ: Մօրնուտի մէջ անցուցած քանի մը օրերու միջոցին, անագի հանքի մը մէջ իջնալ ուզեց եւ վար իյնալով բանական ծանր կերպով վիրաւորուեցաւ: Յետոյ Բօմբիէնէի մէջ Նաբոլէոն Գ. ի հիւր եղած ատեն, որսի միջոցին եղջերու մը ձին խըրտչեցնելով՝ իշխանը վար ինկաւ եւ կարեւոր ճիւղածքներ ունեցաւ: 1869ին Իշխանուհիին հետ Նեղոսի վրայ շոգենաւակով պտոյտ մը կը կատարէր, շոգենաւը բռնկեցաւ եւ հագիւ հազ կարելի եղաւ կեանքերնին ազատել: Նոյնպէս Մարլպըրըֆի դղեակին մէկ մասը այրած ժամանակ իշխանը հոն կը բռնակէր, եւ ինքն էր որ ջրհանկիրներուն աշխատութիւնները հրամայեց՝ աղէտին ժամանակ:

ՋԱՐԵՀ Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ԻՆՉ ՈՐ ԿՐՆԱՅ ԸՆԵԼ ՊԶՏԻԿ ՏՂԱՆ

Ի՞նչ կրնամ ընել Աստուծոյ համար.
Ես այսօր պզտիկ, այսօր վարդերես.
Ահա սրտիկս ինձ կ'ըսէ այսպէս
Թե՛ բարի մայրիկս պիտի սիրեմ յար.
Թե՛ եւ շատ պզտիկ՝ կրնամ սիրել ես:

Ի՞նչ կրնամ ընել դեռ Տիրոջ համար
Մեզ կ'օրհնէ Աստուած Պապան ժմադիմ.
Իմ անկողնիս քով շատ պիտի աղօթեմ
Աստուած Պապային զոր պաշտէ իմ մայր
Կրնամ աղօթել քեւ պզտիկ եմ:

Եւ դեռ ի՞նչ կրնամ ընել աւելի.
Դարոցը ուր ս գիւ միշտ կ'առաջնորդեն,
Ուշադիր ըլլամ իմ դասիս ամեն.
Խիստ ուշիմ ըլլալ ես ջանամ պիտի,
Կրնամ ըլլալ ես քեւ պզտիկ եմ:

Եւ վերջապէս ի՞նչ կրնամ ընել ես.
Թե՛ մայրս խրատէ, յանդիմանէ կամ,
Թե՛ եւ պզտիկ եմ բայց պիտի զգամ,
Ու պիտի ուղղեմ վարս անմիջապէս,
Ահա այս քսակս ես պիտի մեծնամ:

Թարգմ. ՄԱՆԵՒՅԵ

ԹՈՒՐՆԻԷ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ

ԴԱՍՏԻԱՐԱԿԱՆԻԹԻԻՆԸ

ԱՂՋԻԿՆԵՐՈՒ ՎԱԹԱՐԱՆԻ ՄԵՋ

« Հաստատել խորհելու, զգալու գործելու սովորութիւններ. անա անոր մէջն է ամբողջ դաստիարակութիւնը »:

Բ. — ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

14. Խոսովանքի մեր յանցանքը

Միթէ չա՞տ դժուար է ընդունիլ, թէ անիրաւ ենք, երբ ստուգիւ յիմարութիւն մը գործած ենք: Անշուշտ ո՛չ, միայն թէ պէ՛տ է քաջասուքիւն ունենալ իր հպարտութեան յաղթելու համար:

Վարդուհի և Շուշանիկ երկու լաւ բարեկամուհիներ են: Անցեալ օր Շուշանիկ Վարդուհիին պայուսակէն գիրք մ'առած էր բան մը նայելու, եւ ապա մոռցած էր ետ առլ: Վարդուհին կը փնտռէ գիրքը դասը սերտելու համար և չգտներ, վարժուհիին տուած դասը չկրնար սորվիլ, հետեւեալ օրը չկրնար դասը պատմել: Երբ յիշատակեց իր խնդիրը:

Այն ատեն Շուշանիկ կը յիշէ որ այդ յանդիմանեցութեան պատճառն ինքն է: Ոտքի ելնելով վարժուհիին կը պատմէ իր ըրածը, խոստովանելով թէ յանցաւորն ինք է և քարտանքի է անոր տեղ պատժուելու:

Կան տղաք, որոնք այսպէս պիտի չը ճանչնային իրենց յանցանքը: Պիտի փորձէին խորամանկութեամբ տեղը դնել գիրքը և առանց բան մ'ըսելու պիտի թողէին իրենց փոքրիկ ընկերուհին պատժուիլ: Քաջասուքիւն ունեցե՛ք ձեր գործերը նանչնալ որչափ ալ գե՛տ լինին: Այսպէս վարուիլը թէ՛ արդարութիւն է և թէ՛ անկեղծութիւն:

15. Պէ՛տ է իրարու օգնել

Դպրոցի մէջ միշտ իրարու պէտք ունիք: Կը պատահի, որ այսօր դուք մատիտի մը պէտք ունիք և ուրախ, թէ որ ձեր ընկերը

հատ մը փոխ կուտայ: Վաղը կրնայ անիկա իր ասեղը մոռցած լինիլ, դուք ձերինը փոխ կուտաք: Այսպէսով ամէն մէկդ կըրնաք իրարու օգնել, դուք ընկերներուդ համար այն պիտի ընէք, ինչ որ անիկա ըրաւ կամ պիտի ընէ ձեզ համար:

Դպրոցի մէջ իրարու օգնելը ձեր կողմանէ միայն խոհեմութեան հայեցակէտով պիտի չկատարուի, այն ատեն վեհանձնութիւն չլինիր. ան պիտի լինի արդիւնք բարութեան, արդարութեան և նոյն իսկ անձնութեան: Խորհեցէք, որ ձեր ընկերները հոն են, առաւօտէն մինչև երեկոյ միասին կանցնէք, միասին կը սովորէք և կը խաղաք, իբրեւ թէ քոյրեր լինէիք: Ուստի պէտք է այդպէս ալ վարուիլ:

Իրարու փոխադարձաբար օգնելը սովորութիւն ըրե՛ք: Յետոյ կեանքի մէջ այս սովորութիւնը ձեր վրայ կը հաստատուի, այսպէսով առանց նշմարելու ձեր նմաններուն օգնելու մեծ պարտականութիւնը կատարած պիտի լինիք:

16. Այն պարագաներ՝ ուր պէ՛տ է իրարու օգնել

Փոքրիք չար աղջիկ մը կուգէ գէշ խաղ մը խաղալ իր ընկերներէն մէկուն և ձեզմէ կը խնդրէ իրեն օգնել. ուրիշ մը, որ դասը չգիտեր ձեզմէ կը խնդրէ գիրքը բաց բռնել իր մօտը, երբ ինքը դասը պիտի արտասանէ. մի ուրիշը ձեզմէ կը խնդրէ իրեն համար ստել՝ պատժէ մ'ազատելու համար: Ահաւասիկ, տղաք, պարագաներ, երբ պէտք է իրարու օգնել, որովհետեւ երբեք պէ՛տ է օգնել մեկուն գե՛տ գործ մը ընելու համար:

Ձեր ընկերոջը օգնել, որ միւս ընկերի մը գէշ խաղ մը խաղայ, կամ վարժուհին խարէք, դուք ալ անոր պէս յանցաւոր կը լինիք առանց անոր յանցանքը պակսեցընելու:

Երբեմն շատ քաջասրտութիւն պէտք է ունենալ, որ կարելի լինի պզտիկ բարեկամուհիներու սիրոյն դիմադրել անոնց արժանի եղած պատիժը կրել չարագիւլելու համար: Չարէն խոստովելու համար նոյնչափ վարժ պէտք է լինիք որչափ բարիք ընելու համար:

17. Ձեր վարժուհիին ցնդութիւն տալի զգուշացե՛ք

Փոքրիկ անուշադիր աղջիկներ կան, որ կատիպեն իրենց՝ վարժուհիները շատ անգամ կրկնել բացատրութիւն մը, որ առաջին անգամ ըմբռնած չեն:

Վարժուհին կը կրկնէ նորէն անգամ մը, և թերեւ ալ աւելի: Վերջապէս կը յոգնի, ձայնը կը տկարանայ, կը հիւանդանայ. ուրիշն է յանցանքը:

Դուք ամէնքդ կը պատասխանէք. «յանցանքը անուշադիր, մտացիր և ծուլասիրտ աշակերտներուն է, որ վարժուհիին շատ նեղութիւն կը պատճառեն, մինչդեռ կըրնային այս բանէն խուսափիլ»: Կը կարծէք, թէ այս փոքրիկ աղջիկները յանցաւոր չե՞ն և թէ իրենց խիղճը հանգիստ է ըրած այն չարիքներուն հանդէպ:

Տղա՛ք, անոնց մի՛ նմանիք: Յիշեցէք, որ ձեր դպրոցական պարտականութիւնն է ձեր ժամանակէն վայրկեան մը չկորսնցնել, և ո՛չ վարժուհիինը կորսնցնել տալ:

Մանաւանդ յիշեցե՛ք, որ պէտք է մարդու չարիք հասցնել, մանաւանդ անոնց, որ ձեզի բարիք կ'ընեն:

18. Երբ ուսած չեմ

Փոքրիկ աղջիկներ, եթէ կ'ուզէք գիտութեան արժէքը գիտնալ, յիշեցէ՛ք այն պայմանները, որոնց մէջ կ'ապրին տգէտ կիները:

Անոնք նամակ մը գրելու համար ուրիշին օգնութեան պէտք ունին, ինչպէս և ստացած նամակները կարդացնելու համար: Անոնք իրենց գործերը չեն կրնար կատարել, վասն զի չեն հասկնար, և միշտ մը կասկածին անոնցմէ, որոնց պարտ են իրենց գործերը յանձնել և շարունակ կը վախնան թէ գիշերը կը խաբեն:

Անոնք ընթերցանութեամբ չեն կրնար հաճոյալի կերպով անցնել իրենց ժամանակը. առտնին գործերը վերջացնելէն յետոյ իրենց տղայոց պարտականութիւնները կատարելու համար անոնց օգնելու գոհունակութիւնը չունին: Ուսում չունեցող կիները շատ անգամ իրենց շուրջը հազարաւոր շահեկան խօսակցութիւններ կը լսեն և

բայց չեն հասկնար: Իրենց երիտասարդութեան ժամանակ տուած չեն և որչափ կը ցաւին կորուսած ժամանակին համար: Անոնց մի՛ նմանիք, վերջը դուք ալ անոնց պէս պիտի նեղուիք, նոյն ձանձրութիւնները և նոյն խղճի խայթերը պիտի ունենաք:

Տգեհ կիները միայն կիսովիմ կ'ապրին, անոնց ձեռքերը կ'աշխատին, բայց մտքերը փնայած կը մնան:

19. Փոքր ուսարդութիւններ

Դեռատի աղջիկ մը կը ճանչնամ, որ շատ բարի է, բայց այնպէս չերեւիր: Գիտէ՞ք ինչու. որովհետեւ իր շուրջը եղողներուն համար փոքրիկ ուշադրութիւններ չընեն, ինչ որ ընդհանրապէս բարի սրտի յայտարար նշանն է: Եւ այդպիսիները արժանի կերպով չեն դատուիր, որովհետեւ ինչպէս կարելի է սրտի մէջ անցածն երևակայել, եթէ արտաքին ընթացքը բարութեան վերջապահ չէ:

Բաւական չե՛սքով բարի լինել, պէտք է նաեւ արդիւնք ուրիշին ցուցնել: Եթէ մեր ընկերներէն մէկը բան մը ձգէ գետինը, անմիջապէս վերցնենք և իրեն տանք, կամ մէկ ուրիշը հիւանդ է, շուտով անոր օգնենք, խնամենք: Եթէ տեսնենք ծերունի մը փողոցէ անցնելու ժամանակ նեղութիւն կը կրէ. պէտք է ձեռքէն կամ թեւէն բռնելով օգնենք անոր: Երբեմն պէտք է գուշակենք թէ մէկը կը փափաքի մեզի յանձնարարութիւն մ'ընել և չհամարձակիր ու պէտք է յայտնենք մեր պատրաստակամութիւնը: Չմոռնա՛ք որ եւմարիս բարեւարդութիւնը կը կայանայ աւելի առօրեայ հազարաւոր փոքրիկ պարագաներու մէջ, քան թէ կեանքի մեծ պատահարներու մէջ:

ՏԻԿԻՆ Փ. ՀԱՉԱՐԱՊԵՏԵԱՆ

ՄԻԱՄԻՏ ՊԵՏՄՈՒԹԻՒՆ ՄԸ

ԴՐԱԽՏԻՆ ՃԱՄԲԱՆ

Գեղեցկադէմ եւ խոշոր սեւ աչքերով տղայ մը, ցնցոտիներ հագած ու ոտքերը բոպիկ, հիւանդանոցի մը դրան առջեւ կե-

ցած եւ իր աչքերուն մէջ անհուն պաղատանք մը ցոլացնելով, կը հարցնէր դռնապանին, այնպիսի ձայնով մը որ կարծես անձաւի մը խորէն կուգար:

— Ո՞ւր է մայրիկս... անուշիկ մայրիկս: Դռնապանը՝ վայրենի մը, բառին լայն առումով, ու տգեղ դէմք մը, որչափ որ կարելի էր երեւակայել, յօնքերը պոստելով ու բռունցքը սեղմելով, ու ամէնէն վայրագ շեշտով մը՝ — Կորսուէ՛, սըկէց, լաւո՛ւս, ոռնաց սւ թթին տակէն շարունակելով հայհոյել:

Պապու — այժմ էր տղեկին անունը — սարսափահար ու հռնափափ անկիւն մը կըծկըտեցաւ ու իր նիհար դէմքը թեւեւ ծածկելով, լռիկ հեծկիտալ սկսաւ: Մինչ կը շարունակէր լալ, ուրիշ յիմարի մը ուշադրութենէն չէր վրիպած՝ դռնապանին ըսած անտեղի յանդիմանութիւնը, ուզեց սրտակցիլ պզտիկին հետ, ու կրցածին չափ ձայնը մեղմացնելով՝

— Ինչու կուլաս, աղբար:

— Մայրիկս, սիրելի մայրիկս կ'ուզեմ, հեկեկէց տղեկը:

— Մայրիկդ, ըսաւ յիմարը, որուն ճակտին վրայէն սեւ ամպ մը անցաւ, ճակատը փոթփոթեցաւ... մայրիկդ երեկ փոսը նետեցինք, աղքատիկ փոսը, ու այս ըսելով հիւանդանոցին դիմացի լայն պողոտան ցուցուց ու հեռացաւ:

* *

Պապու, քալեց ու քալեց ամբողջ օրեր ու գիշերներ. մայրը Դրախտին նամբան ձեռք առած էր, ինքն ալ պիտի երթար ու գըտնար: Պատահական ճամբորդներու ճամբան կը հարցունէր, որոնք « Ճամբորդութիւնդ դժուարին է ու նպատակդ ալ շատ հեռուն է » կ'ըսէին: Իսկ Պապու միշտ կը քալէր, գերմարդկային ոյժէ մը մղուած կարծես կը թռչէր. ո՛չ յոգնութիւն կ'զգար եւ ո՛չ ալ անթութիւն, մօրը սէրը միայն կը սնուցանէր իր հիւծած մարմինը: Միշտ կը մտածէր ու սա հարցումը կ'ընէր ինքնիրեն թէ՛ « Ինչո՞ւ, ի՞նչ պատճառաւ մայրիկս մինակ ձեռք առաւ այս անիծեալ ճամբան: »

* *

Ու առանց կանգ առնելու կը քալէր. վերջապէս անթութիւնն ու յոգնութիւնը

ոյժասպառ ըրին զայն. գեղեցկադէմ Պապու՝ նիհար ու վտիտ կմախք մը դարձեր էր. գերմարդկային ճիգ մը ընելով կ'ելլայ եւ ձեռք կ'առնէ իր ճամբան. բայց ինքն ալ չէր գիտեր թէ ո՞ւր կ'երթար: Կը կորսնցնէ ճամբան, կը մանայ լուռ ու մթին գերեզմանատունը. հոն էր իր մայրիկին անշուք հողակոյտը... քայլ մը եւս... ու ահա կը տօգունի, կը դողդողայ ու զգայազիրի կ'իյնայ, ու հրաշքով, իր այնչափ կաթոգին սիրած մօրը գերեզմանին վրայ, ու այդ լռութեան ու մենութեան մէջ կը դադրի այլ եւս ապրելէ: Մահը չարաշուք ու երջանկաբեր կը բաժնէ եւ կը միացնէ զայն՝ երկինք իր մօրը ծոցին մէջ նետելով, որմէ պանդուխտ էր մնացեր այնքան ատեն:

Օր մը՝ երբ մի եւ նոյն յիմարը, դարձեալ գերեզմանատուն կուգայ, կը տեսնէ տղուն դիակը. վերյուշում մը կ'ունենայ. կը շօշափէ պաղած մարմինը, արցունքներով կը լեցունին աչքերը ու բրիչը առնելով՝ տղան իր մօր քովիկը կը թաղէ, մտքէն ազօթք մը մուտալով գերեզմանէն անզգայ հողին վրայ: Ու վերջին ակնարկ մը նետելով, այս գերեզմանին մէջ պառկող երջանիկ էակներուն վրայ, կը մեկնի սպասելով այն օրուան, որով ինքն այդ դրախտին ճամբան պիտի բռնէ:

Թարգմ.

Գ. ԹՈՐՈՍԵԱՆ



ՄԱՅՐԻԿԻ ՍՊԱՍԵՐԸ

Թոնիրին շուրջ նստած, անհոգ,
Ձեռքս կարմիր մի փերական՝
Կ'ըսէի դասս, խելօք, խելօք
Մայրիկիս եով իմ սիրական:

Փսիկն իմ եով կը խաղկոսար,
Քսուրսեղով ձեռքս ոտքս,
Մինչ շուքս անդին գլուխը դար վար,
Անքառք հայեր մեզ երկուքս:

Կուռքն ալ, սիրուն իր ձագերով,
Ձի՛գ, ձի՛գ, ձի՛գ, ձի՛գ՝ կը կսկսար,
Եւ երբ կուս մը գտնէր, սիրով
Ձայն ձագերուն կանչէր կուսար:

Անոնք երբեմն գալով մեր ետ,
Թուշքեին ձեռքիս ուսիս.
Իրենց անուշ, պզտիկ երգով
Խնդացնեին մայրիկս ու զիս:

Բայց ես հանդարտ ու խելօքիկ,
Կը կարդայի գիրքս սիրուն.
— Ի՞նչ բաներով, ո՞հ, իմ մայրիկ,
Սերս հակած եր այդ գրքերուն:

Եւ ի՞նչ սիրով, անհուն, յսակ,
Կը համբուրէր զիս շա՛տ անգամ,
Երբ հեգեի՝ բառ մը շիտակ,
— Ո՛ր սիրովաւ սիրս մայրական...:


Սակայն հիմա յոգնած, լերդո՛ղ,
Երբ գլուխս առած ձեռքերուս մէջ,
Կ'ուզեմ մոռնալ հոգեւս ճնշող,
Հին յուշիկներ ծնին անցեջ:

Ու կարօտով նայիմ չորս դիս:
Ո՛ւր է այն կեանք՝ մաքուր, համեղ,
Թոնիրն, երդիւն, հաւն, որ սրբիս
Կուսային միշտ խիմարեւ անմեղ:

Կապոյտի՞ն մեջ, որ կը փայլի,
Փնտրեմ ի զուր՝ մօրս պատկեր,
Թեւերը բաց ու սխալի,
Որպէս շա՛տ հեղ զիս կը գրկէր:

Տիարպէրիր

Լեւոն ՍՐԱՊԵԱՆ



Խ Ե Լ Ա Յ Ի Թ Ո Ի Թ Ա Կ Ն Ե Ր

Գեղեցիկ սրահներու մէջ սիրուն թու-
թակներու հանդիպած էք: Իրենց փետուր-
ներուն եւ մարմինին գեղեցկութեան հետ,
այդ թռչունները ձայնի ներդաշնակութիւն
եւ նրբութիւն մը ունին: Որքա՞ն հիացած
ենք ի տես այդ ընտանի թռչունին, որ ա-
ռանց դժուարութիւն մը կրելու, կը գեղգեղէ
և մարդկային ձայնի ամէն ելիւէջները կ'ար-
տասանէ աննման եւ ճաշակաւոր նմանու-
թեամբ մը: Թութակները շատ անգամներ
անանկ բառեր, անանկ ձայներ կ'արտաա-
նեն որոնց չենք ուզեր հաւատ ընծայել գիտ-
նալու համար թէ ի՞նչպէս թռչուն մը կարող

կ'ըլլայ մարդկային ձայնին ամէն նմանու-
թիւններն ընելու առանց կանխաւ դատ մը
առած ըլլալու: Բնութեան պարզեւած օ-
ժիտն է այն բնագոյնով կոչուած, զոր ամէն
կենդանիներ ունին, ամենառօշինջ միջատէն
սկսեալ մինչեւ ամենահսկայ անասունն: Եւ
ամէնուն վրայ կը տիրէ ՄԱՐԴՆ իւր իմա-
ցական զօրութեամբն եւ բանականութեան
դեղեցկագոյն յատկութիւններովն: Խելացի
թութակներու վրայ սիրուն պատմութիւններ
պիտի ընեմ ձեզ որոնցմէ կը յուսամ թէ գոհ
պիտի ըլլաք:

Հենրիկոս Ը. Թութակ մը ունէր: Այս
թռչունն օր մը թայմի գետին մէջ ինկաւ:
Նաւարկեալներուն եւ ծովուն մէջ ընկղմող
նաւավարներու նման սուր ճշեր հանեց եւ
օգնութիւն կոչող մարդու մը ամէն ազա-
դակները արձակեց: Եզերքի մարդիկ եկան
ազատել զինքը գետին ալիքներէն:

Թութակ մը կար որուն եթէ ըսէին «Խըն-
դա՛, թութա՛կ, խնդա՛», անմիջապէս կը
խնդար մեծաձայն եւ վայրկեանէ մը վերջ
կ'ըսէր խոժոռ դէմքով «Ահա՛ տխմար մը
որ զիս կը խնդացնէ»: այսպէս սորվեցու-
ցած էին:

Ուրիշ թութակ մը իր տիրոջը հետ ծե-
րացած, մասնակից կ'ըլլար անոր տառա-
պանքներուն եւ միշտ անկից սա բառերը կը
ըսէր. «Հիւանդ եմ»: Օր մը թութակին
հարցուցին. «Ի՞նչ ունիս, թութակ»: —
«Հիւանդ եմ», պատասխանեց վշտագին ձայ-
նով մը:

Ուրիշ պատմութիւն մը: Մէկ քանի դե-
ռատի աղջիկներ իրենց գիւղին վարժարանը
կ'երթային ամէն առաւօտ տան մը առջեւէն
անցնելով՝ որ իրենց ճամբուն վրայ կը գտ-
նուէր: Տանը վանդակապատ պատշգամբին
վրայ թութակ մը կար որ աղջիկներէն լը-
սած էր գովեստի հետեւեալ խօսքերը «Այ-
նոր մազեր ունեցողը». հաւանականաբար
դպրոցականները այս անունը կուտային ի-
րենց մէջէն ամէնէն գեղեցիկին: Յաջորդ-
օրերը, երբ աղջիկը առանձին անցնէր նոյն
տանը առջեւէն, թութակը կտուցը բանա-
լով՝ վանդակին ճեղքերուն մէջէն կը գո-
չէր. «Աղուոր մազեր ունեցողը...»:

Տօքթ. Յարանքիւն հետեւեալ շահեկան
դէպքը կը յիշատակէ. «Ճանչցայ, կ'ըսէ
երկու թութակներ որոնք միասին չորս տարի

ապրած էին: Էգը հիւանդ ինկաւ և սրունքները ուռեցան. կուք կոչուած հիւանդութեան ենթարկուած էր, որմէ կը բռնուին գրեթէ Անգղիոյ ամէն թռչունները: Չէր կրնար վանդակէն վար իջնել, սնունդ առնել ու առաջուան ամէն խեղկատակ շարժումները կատարել: Արու ընկերը չորս ամիս անընդհատ խնամեց զանի: Երբեմն կը տուցովը կը բռնէր թռչունին թեւերէն վեր հանելու ճիգեր կ'ընէր եւ չէր յաջողէր, որովհետեւ էգը հիւանդ էր: Իր ամէն մէկ շարժումն, ցաւագին աղաղակները ու դէմքին մէն մի արտայայտութիւնն կենդանի վկայ մը էին իր զգացած դառն վշտին:

Այսպէս է թուութակը, համեստ թռչուն մը, տեսքով գեղեցիկ, ձայնով յանկուցիչ, դէմքով սիրուն եւ հանճարեղ իր շարժումներուն, իր նմանողութիւններուն եւ զգացողութիւններուն մէջ: Բնութեան ամէն պարզեւները առատաբար շուայուած են մարդուս եւ կենդանիներուն: Այս հիւանայի կարողութեանց հանդէպ, մարդ երկիւղածութեամբ կը պաշտէ իր Արարիչն. պարգեւատու այնքան շնորհքներու եւ բարիքներու:

Մ. Մ.



ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ԴԱՍԵՐ

Ծաղիկին բեղմնաւորութիւնը. — ՊՏՈՒՂ

Արդէն անդամ մը ըսած ենք որ ծաղիկէն առաջ կուգայ պտուղը, և անշուշտ, պզտիկ բարեկամներս, դուք ալ նմարած էք ասիկա: Բայց գիտէ՞ք թէ ինչպէս առաջ կուգայ ան. չեմ կարծեր, ուստի յարմար դատած եմ այս դասով խօսիլ ծաղիկին բեղմնաւորութեան վրայ, այսինքն՝ թէ անիկա ինչպէս պտուղի կը փոխուի:

Երկար ատեն մարդիկ չէին գիտեր թէ ծաղիկ մը ինչպէ՞ս կը բեղմնաւորի, և վերջին դարուս էր որ շատ մը մեծ գիտուններ, ինչպէս Մոնը, Շլայտէն, Պրօնիար, Հօֆմայստէր ևն. այլ և այլ փորձեր, քըննութիւններ կատարելով գտան այս եղանակը, այս եղանակը, ինչ որ պիտի բացատրենք հիմա:

Անշուշտ միտքերնիդ պահած էք ինչ որ խօսեցայ անցեալ անգամներուն՝ ծաղիկին կազմութեան վրայ: Ծաղիկ մը ունի երկու տեսակ գործարաններ արու և էգ, այսինքն առէջներ և իգայ. առէջին գաղաթը կար սրսիկը՝ որ բեռնաւորուած էր բեղուն փոշիով: Հիմա մեր ըսելիքները օրինակով բացատրելու համար առնենք վարդի մը տունկը՝ որ գեղեցիկ ծաղիկներ բացած է. երբ ծաղիկը կ'աճի, կը զարգանայ (սրսիկներուն բեղուն փոշին ալ արդէն գտած ըլլալով իրեն պէտք եղած աճումը) սրսիկները կը բացուին և բեղուն փոշին կը թափի իգային վերի մասին՝ այսինքն կնիքին վրայ, հոս կայ մածուցիկ նիւթ մը՝ որ կը ծծուի բեղմնափոշիէն, այս պզտիկ փոշիները այդ հիւթը ծծելէ ետք կամաց կամաց կ'ուռենան և կը կազմեն լախտաձեւ խողովակ մը՝ որ կնիքին մէջ մտնելով կ'անցնի ծիլէն և կ'երթայ ձուարանին մէջ լախտաձեւ նուրբ խողովակին մէջ գլուխոտող սաղմնանիւթ կոչուած հիւթը կը թափի ձուիկներուն վրայ, որոնք անոր զօրութիւնովը կ'արգասաւորուին, կը բեղմնաւորուին և կը փոխուին նազմերու՝ և որոնք յետոյ սերմի կը փոխուին. այս սերմն ապագայ նոր բոյս մը յառաջ բերելու պիտի ծառայէ: Ահա բեղմնաւորութիւնը իր համառօտ գիծերուն մէջ:

Սակայն պիտի առարկէիք հիմա, եթէ կան այնպիսի բոյսեր՝ որոնց ծաղիկները անկատար ըլլալով արու գործարաններ չունին, ինչպէս պիտի արգասաւորուին, քանի որ իգան չպիտի կրնայ իր մէջ ընդունիլ սրսիկին թափած բեղուն փոշին՝ որ ձուիկները պիտի բեղմնաւորէր: Այո, իրաւունք ունիք. ծաղիկ մը՝ առանց առէջներու՝ չի կրնար արգասաւորուիլ, և մի միայն իգա ունեցող ծաղիկները չպիտի կրնային պըտուղի փոխուիլ, ու եթէ կ'ուզէք փորձով կրնանք ստուգել այս բանը. առնենք ո՛ր և է արու և էգ ծաղիկ մը, օրինակի համար վարդ մը. փրցնենք անոր առէջները՝ երբ դեռ սրսիկները չեն թափած իրենց բեղուն փոշին, պիտի տեսնենք վերջէն որ ձուիկները չեն արգասաւորուիր, և ծաղիկը պըտուղի չի փոխուիր: Ուրեմն ըսել է բոլոր միասեւ ծաղիկները չարգասաւորուելու պիտի դատապարտուեն. ո՛չ, այժմ դիւրմի մը

միայն էգ ծաղիկը, գտիր դարձեալ միայն արու դգուժի ծաղիկ մը, և ասոր առէջները տար թոթուէ՝ էգ ծաղիկին պսակին մէջ՝ իգային վրայ. այդ էգ ծաղիկը պիտի արգասաւորուի վերջէն, նոյնպէս կրնանք ըսել ուրիշ միասեռ ծաղիկներու համար: Այս իրողութիւնը շատ ժամանակներ ծանօթ էր Արաբներուն:

Շատ մը բոյսերու ծաղիկները՝ արու և էգ են, և ասոնց բեղմնաւորութիւնը ապահովուած է. կան ուրիշ միասեռ ծաղիկներ ունեցող բոյսեր ալ՝ որ միատուն են և իրենց վրայ, կը կրեն թէ՛ արու և թէ՛ էգ ծաղիկներ. ասոնք ալ իրարու մօտ ըլլալով կրնան բեղմնաւորիլ. բայց կան այն տեսակ բոյսեր ալ՝ որոնց ծաղիկները մէկ տունկի մը վրայ արու են, և մէկ տունկի վրայ ալ էգ, և երբեմն ալ այնպէս կը պատահի որ արու ծաղիկ կրող ծառը հեռու կ'ըլլայ էգ ծաղիկներ կրողէն: Այս ատեն ուրեմն այդ բոյսերուն ծաղիկները չպիտի կրնան բեղմնաւորուիլ, քանի որ անկարելի է այդ ամէնուն վրայ ալ ձեռքով բեղմնափոշի թափել: Բայց կը բեղմնաւորին անոնք: Ժրաջան մեղուն ելած է այց տալու ծաղիկներուն՝ որոնցմէ պէտք է հաւաքէ նեկտարը՝ իր անուշահամ մեղրը պատրաստելու համար. որպէսզի անիկա կարենայ առնել այդ հիւթը՝ կը մտնէ ծաղիկին սրսիկին մէջ. այն ատեն բեղուն փոշին կը փակչի անոր ոտքերուն, ու երբ ան կ'երթայ ուրիշ ծաղիկի մը պսակին մէջ մտնել, հոն կը թողու գանի, որով այդ ծաղիկը կրնայ բեղմնաւորուիլ: Հովերն եւ ուրիշ շատ միջատներ նոյն դերը կը կատարեն:

Երբոր բեղուն փոշին ձուարանին մէջ կը թափի, և բեղմնաւորութեան շրջանը կ'անցնի, այն ատեն նորակազմ պտուղը կ'սկսի հասուննալ: Ծաղիկին միւս բոլոր մասերը կը չորնան եւ բոյսէն եկած անունդը ալ մի միայն ձուարանին կ'երթայ:

ՊՏՈՒՂԸ. — Հիմա որ սորվեցանք թէ ինչպէս յառաջ կուգայ պտուղը՝ ալ կրնանք քանի մը տող նուիրել ասոր: Պտուղին վերայ խօսելու համար, սկսինք նախ անոր կազմութենէն:

Պտուղ մը կազմուած է երկու գլխաւոր մասերէ՝ որոնք են պարկուն և սերմը: Պարկունը՝ այսինքն պտուղին դուրսի

մասը երեք խաւերէ կազմուած է. կնեպ, մալլիմ մաս, ցեբֆնախաւ: Կնեպը բարակ մաս մըն է՝ որ դուրսի կողմէն կը պատէ պտուղը: Պտուղին մօտ մասն է, որ կուտենք մենք, ինչպէս օրինակի համար տանձին, խնձորին, սալորին ուտելի մասերը: Շատ պտուղներ կան որոնց միւսը չորնալով կը կարծրանայ եւ փայտային հիւսուածքի մը կը փոխուի, ինչպէս ընկոյզը, նուշը: Ներքնախաւը այն մասն է որ պտուղին ներքին կողմը կը գտնուի և կը պատէ սերմը, անուշտ ձենէ շատեր նշմարած են որ շատ մը պտուղներու սերմերը չընկալաւորուած են փայտային կարծր մասով մը, ինչպէս սալորին, դեղձին, կեւասին, կաղնիին, կաղինին պտուղներուն մէջ կը տեսնուի. այս փայտային մասը, ուրիշ բան չէ, եթէ ոչ պտուղին ներքնախաւը:

Պզտիկ բարեկամներս, արդեօք ձեր ուշադրութիւնը գրաւած է պտուղներու պարկունը՝ որ շատ փոփոխական է ձեւով և կազմութիւնով. որով պտուղին ձեւն ալ կը փոխուի. օրինակի համար երբ կ'առնենք լուբիայի, բակլայի, սալորի, սերկեւիլի պտուղները՝ կը տեսնենք որ ձեւով մեծ տարբերութիւն մը ունին, ոչ նուազ նաեւ կազմութիւնով: Առնենք սալորը ու քննենք, անոր պարկունը դուրսէն բնաւ հետք մը չի ցոյցներ բաժանման, նոյնպէս սերկեւիլինը եւ ուրիշներունը. բայց բակլային եւ լուբիային պտուղներուն պարկունը դուրսէն յայտնի կերպով երկու մասերու բաժնուած է. այս մասերը կը կոչուին պաւեան, որուն նայելով պտուղները կրնանք երեք կարգի բաժնել, միապաւեան՝ ինչպէս տանձ, սերկեւիլ, խնձոր, սալոր եւայլն. երկապաւեան՝ ինչպէս լուբիա. բակլա, չահպրակ, եւլն. եռապաւեան՝ ինչպէս չուշան: Պտուղներու ներքին խորշերը կամ խնձերը՝ ուր սերմերը դրուած են, կրնան նոյնպէս փոփոխական ըլլալ. կան պտուղներ՝ որ միայն մէկ խորշ ունին, ուրիշներ՝ երկու, ուրիշներ՝ երեք, եւ այսպէս կրնան կոչուիլ միախորշ, երկխորշ եւ եռախորշ. այս խորշերն ալ կրնան մէկ կամ աւելի սերմեր ունենալ իրենց մէջ եւ կը կոչուին միապաւեան խորշ կամ բազմապաւեան խորշ:

Գալով սերմին, ինչպէս տեսանք արդէն՝ ասիկա ձուիկ մըն էր առաջ՝ բեղմնաւորե-

ցաւ եւ սաղմի, յետոյ սերմի փոխուեցաւ, ասիկա պտուղին էական մասն է, որովհետեւ ասկէ է որ առաջ պիտի գան ուրիշ նման բոյսեր: Առնենք ուրիշ սերմ մը, օրինակի համար լուբիայինը, ու քննենք. ասիկա դուրսէն պատուած է փայլուն թաղանթով մը՝ որ վերնամասէ կը կոչուի, պատուենք ասիկա, ահաասիկ երկու հատ ուռուցիկ մասեր, ասոնք կը կոչուին բլթակներ. սակայն, ինչպէս նշմարած էք թերեւս, շատ մը բոյսերու պտուղին սերմը մէկ բլթակ միայն ունի, ինչպէս, ցորենը, եգիպտացորենը, սալորը, եւայլն: Լուբիային հունտին վրայ մեր քննութիւնը շարունակելով, երկու բլթակներուն մէջտեղը կը գտնենք խիստ պզտիկ մաս մը՝ որ հունտին սաղմն է. երբ որ ասի սկսի բողբոջիլ հողին մէջ, բլթակները անոր սնունդ կը մատակարարեն:

Կան բոյսեր՝ որոնց պտուղը հազարաւոր սերմեր կը պարունակէ, օրինակի համար, խաշխաշին պտուղը կրնայ 32—53000 հատ սերմ ունենալ, ծխախոտինը 300000է աւելի իսկ դարին՝ 1700—1800:

ԱՇՈՏ Յ. ՊԱՉՊԱՉԵԱՆ

ՎԵՐՉ



Գ Ի Տ Ա Կ Ա Ն Վ Է Պ

Թ Ի Ի Լ Վ Ի Ր Ն

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

ԴԵՊԻ ԵՐԿՐԻՍ ԿԵԴՐՈՆԸ

(Շարունակութիւն 25րդ թիւէն)

ԼԵ,

Ուրբաթ 21 Օգոստոս

Առջի իրիկուն հաշիւներս կարգի դնելով տեսայ որ Կրաիւպէնի նաւահանգիստէն մեկնելէս ի վեր երկու հարիւր եօթանասուն միոն ճամբայ առած ենք, որով իսլանտայէն գրեթէ վեց հարիւր քսան միոն հեռացած ենք. Անգլիոյ տակը կը գտնուինք:

Կարծեմ օդը պիտի փոխուի. հեռուն սեւ սեւ ամպեր կազմուելով իրար կը ձուլուին

և ահագին վարագոյրի մը պէս երկինքը կը ծածկեն. մթնոլորտը ելեքտրականութեամբ լեցուած է. փոթորիկ մը մօտաւորապէս:

— Գէշ օդ մը պիտի սկսի, ըսի:

Հօրեղբայրս բնաւ չպատասխանեց, Հովը բոլորովին դադարած էր այդ պահուն:

— Առաջաստը վար առնենք, յարեցի, խոհեմութիւն է:

— Ձգէ՛, գոչեց հօրեղբայրս, սատանին սիրոյն համար առաջաստին մի՛ դպչիր, թո՛ղ Հովը տանի մեզի, փոթորիկը քէ մեզ, կը բաւէ որ ցամաքի մը ժայռերը տեսնեմ:

Յանկարծ հով մը, հարաւէն փռող քամի մը յափշտակեց դիւրաբեկ նաւակինս և յիմարացուցիչ արագութեամբ մը զայն յառաջ նետեց փրփրոտ ջրերուն վրայ: Հօրեղբայրս ու ես մէյմէկ չուանի ծայր սեղմելով կառչեցանք, Հանս՝ միշտ դէկին գլուխը կը կենար, երկար մազերը հովին ցիրուցան եղեր էին և ամէն մէկին ծայրերէն լուսեղէն փունջ մը կը ցցուէր: Անձրեւը տեղատարափ սկսաւ հոսիլ, ամպերը պատուեցան և կոհակները իրարու կը յաջորդէին անհամար խաղեր ընելով: Ելեքտրական հոսանուտը շարժման մէջ դրուած էր, մետաղեայ գործիքներնիս սկսան լուսաւորուիլ, ծովուն ալիքները կը փոսփորափայլէին: Աչքերս շմորեցան, ականջներս խուլցած էին կայծակին ազմուկէն:

(Հոս ծանօթագրութիւններս անկանոն են, հազիւ հազ քանի մը դիտողութիւններ կրցայ արձանագրել:)

Կիրակի 23 Օգոստոս

Ո՛ւր ենք, անհաշուելի արագութեամբ հովը մեզ կը քէ: Գիշերը սոսկալի անցաւ. փոթորիկը չհանդարտիր. կայծակ ու որոտում անդադար իրար կը յաջորդեն:

Երկուշաբթի 24 Օգոստոս

Ա՛լ վերջը չպիտի՞ գայ: Յոգնութենէ պարտասած ենք: Փոթորիկը կը կրկնապատկէ իր սաստկութիւնը: Երեք օրէ ի վեր խօսք մը չենք կրնար փոխանակել իրարու հետ. բերաննիս կը շարժենք առանց իմանալի ձայն մը կարենալ հանելու: Հօրեղբայրս բերանը ականջիս կը մօտեցնէ և բան մը կը մրմնջէ. կարծեմ «կորսուած ենք» կ'ըսէ: Ես աակաւին յոյս չեմ կտրած: Նշան

ըրի որ առագաստը վար առնենք. հաւանեցաւ: Գլուխս դարձնելու ժամանակ չունեցած, լաստին եզերքը հրեղէն գունտ մը երեւցաւ. կայմն ու առագաստը թռան անհետացան ակնթարթի մէջ: Վախերնուս քարացեր մնացեր էինք. գունտը կէս ճերմակ, կէս երգիներանգ, տալը մատնաչափ մեծութիւն ունէր, սկսաւ կառնայ կամաց պալը-

կաները և կօշիկիս գամերը ոտքս ամուր կը բռնէին լաստին վրայ: Յանկարծ վառաւոր լոյս մը ողողեց մեզի. գունտը պայթած էր. հօրեղբայրս լաստին վրայ գլորեցաւ. Հանս միշտ իր տեղն էր՝ « կրակներու մէջ »:

Նոյեմբերի 25 Օգոստոս

Նրկար անդգայութենէ մը յետոյ կ'ար-



տիլ լաստին բռնորտիքը, ներս եկաւ, սընտուկներուն վրայէն սահեցաւ ու Հանսի ու հօրեղբորս քովէն անցաւ. չիտակիլ վրաս հուզար կոր, ուղեցի ոտքս քաշել՝ որ անցնելու տեղ ձգեմ. բայց անկարելի եղաւ. Բօրակածային հոտ մը ծաւալեցաւ օդին մէջ. կը խեղդուէինք կոր: Ինչո՞ւ ոտքս չէի կրնար երերցնել. կարծեմ այս հրեղէն գունտէ մագնիսացած էր բոլոր մետաղէ առար-

թըննաւ: Փոթորիկը կը շարունակէ: Աներեւակայելի արագութեան մը մէջ բռնուած չեմ կրնար միտք ընել թէ ո՞ր տեղերը հասանք: Անդլիոյ Մանչի, Ֆրանսայի ամբողջ Ներոպայի տակէն անցած ըլլալու էինք. ո՞վ գիտէ...

Նոր աղմուկ մը կը լսեմ. ծովն է որ ցամաքի վրայ կը խորտակուի...:

12.

Հոս կը վերջանայ « Ճամբորդութեան Օրագիրը » : Լաստը ժայռերուն զարնուելով ամէնքս ալ ծովը ինկանք : Անշուշտ ալիքները ինծի հեռուները տարած էր եթէ Հանսի հոգեկու բազուկը զիս չբռնէր ու վեր չհանէր : Քաջասիրտ Իսկանտացին ինծի ազատելէն ետքը վազեց գնաց լաստին վրայի կարասիներնիս ցամաք հանելու և կրցածին չափ լաստը ազատելու : . . .

Յաջորդ օրը օդը սքանչելի էր : փոթորիկը բոլորովին կտրեր էր : Հօրեղբօրս ուրախութիւնը աննկարագրելի էր : արթննալուս պէս քովս եկա :

— Ինչպէ՞ս ես, Աքսէլ, աղէկ քնացա՞ր :

— Սքանչելի կերպով : Մինակ ինքզինքս տնկաւին յոգնած կ'զգամ : Բայց դո՛ւք հօրեղբայր, շատ ուրախ կ'երեւիք :

— Շատ ուրախ, տղաս, չա՛տ, վերջապէս հաղանք :

— Ո՛ր, ճամբորդութեան վախճա՞նք :

— Ո՛չ, հապա անվերջանալի ծովուն եղէրքը : Այլ կրանք նորէն ցամաքի համբան ձեռք առնել եւ երկրիս փորոքը թափանցել :

— Հօրեղբայր, ներեցէ՛ք որ հարցում մը րնեմ :

— Խօսէ՛, տղաս :

— Ի՞նչպէ՛ս ետ պիտի դառնանք :

— Ե՛տ դառնանք, հա՛, երթալիք տեղերնիս դեռ չենք հասեր, ետ դառնալը կը մտածես :

— Այդպէս չէ՞. մինակ կ'ուզէի հարցնել թէ ո՞ր ճամբով ետ պիտի դառնանք :

— Ատկէ պարզ բան չկայ : Երկրիս կեդրոնը հասնելուն, կամ նոր ճամբայ մը պիտի գտնենք դուրս ելլելու և կամ եկած ճամբանուտ ետ պիտի դառնանք :

— Ուտելիքնիս չպիտի բաւէ :

— Բ՞ով ըսաւ, Հանս ճարպիկ տղայ մըն է : պաշտներու գրեթէ մեծ մասը ապատեր է : Չորս ամիս բաւելու չափ ուտելիք ունինք, թէ երթալուս եւ թէ դարձին համար կը բաւէ : աւելցածովն ալ Եօհաննէօմի պաշտօնապիցներուն հացիկերոյթ մը պիտի տամ :

Գործիքներուն մեծ մասը, ամէնէն պէտքերները ազատուած էին : Կէնքերը մինակ կորսուած էին : Ծաշի ժամանակ գտնուած տեղերնու դիրքը ճշգրիտ խօսք եղաւ :

— Քիչ մը դժուար է այդ, ըսաւ հօրեղբայրս :

— Բայց կրնանք մօտ ի մօտոյ հաշուել :

— Փոթորիկին նախընթաց օրը Իսկանտայէ գրեթէ 600 մղոն հեռացած էինք :

— Լաւ, այդ կէտէն մեկնինք : փոթորիկը չորս օր տեւեց եւ 24 ժամուան մէջ մեր ունեցած արագութիւնը 80 մղոնէ պակաս չէր :

— Ըսել է հիմա Միջերկրականի տակը կը գտնուինք :

— Բայց կրնայ ըլլալ որ Իսկանտայէ միեւնոյն հեռաւորութիւնը պահելով հանդերձ անանկ ուղղութիւն մը բռնենք որ Ատլանտեանի կամ Պալքաններու տակը հասած ըլլանք :

— Չեմ կարծեր, պատասխանեց հօրեղբայրս, բայց ինչ եւ է, անգամ մը կողմնացոյցը նայինք :

Շուտով երկուքս ալ գործիքներուն քովը գացինք ու հօրեղբայրս սկսաւ կողմնացոյցը քննել : Մէկէն ի մէկ դէմքը փոխուեցաւ :

— Ի՞նչ կայ հարցուցի :

Նշան ըրաւ որ գործիքը դիտեմ : Կողմնացոյցին ասեղը մերին հիւսիս կարծած կողմը հարաւ կը ցուցնէ : քննեցի, տեսայ որ գործիքը բնաւ աւրուած չէր : Ըսել է փոթորիկին ժամանակ ուղղութիւննիս փոխելով մեկնած կողմերնիս եկեր ինկեր էինք :

13.

Հօրեղբօրս զգացածը նկարագրել անկարելի է : բոլոր քաջած նեղութիւննիս, անցուցած վտանգնիս պարապը գացեր էին :

— Ա՛խ, գոչեց հօրեղբայրս : ճակատագիրը ասանկ խաղեր կը խաղայ ինծի, ջուրը, կրակը, օդը կը միաբանին իմ յաջողելուս արգելք ըլլալու համար : աղէկ : Թող ամէն մարդ սորուի իմ կամքիս զօրութիւնը, տեղի չպիտի տամ, չպիտի ընկրկիմ, և տեսնենք թէ ո՞վ կը յաղթանակէ : մա՞րդը թէ բնութիւնը :

— Ինծի մտիկ ըրէ՛ք, ըսի ամուր ճայնով մը, այս աշխարհիս վրայ ամէն մարդկային փառասիրութեան համար սահման մը մը կայ, անկարելիին դէմ մարտնչիլ օգուտ չընէր, ծովու վրայ 500 մղոն տեղ անցնելու համար ասանկ խեղճ փայտի կտոր մը չբաւեր : Այս անանցանելի ճամբան երկ-

ըորդ անգամ փորձելը խելքի դէմ է :

— Լա՛ստ նոտինք, գոչեց հօրեղբայրս՝
առանց ըսածներս մտիկ ընելու :

Ի՞նչ կրնայի ընել, կամայ ակամայ հնա-
զանդեցայ և քիչ վերջը ամէն բան պատ-
րաստ էր ճամբայ ելլելու համար :

— Վա՛ղը պիտի մեկնինք, ըսաւ հօրեղ-
բայրս, կ'ուզեմ վերջին անգամ մը աչքէ
անցնել այս ծովեզերը ուր բազդը նետեց
մեզի. սիրտս հանդարտ պիտի հեռանամ այս
ցամաքէն :

Թարգմ.

ՁԱՐԵՆ Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ

(Շարունակելի)



ԴԱՍԱԳՐՔԵՐՈՒ ԽՆԴԻՐԸ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Հինցած, ծերացած խորագիր մը՝ որ
մերթ ընդ մերթ մանկավարժական յօդուած-
ներու գլուխը կը դարդարէ, եւ որու մօտան
կ'երեւի թէ չէ անցած, ինչպէս այս անգամ
ալ Հինդլեան էֆ. Իլլզսնդիոնի 1753 թի-
ւին մէջ երկար յօդուած մը կը նուիրէ այս
խնդիրներուն եւ վերջաբանին մէջ մեր շան-
րագիտակի համար ալ քանի մը խրատական-
ներ կ'ուզէ :

Դասագրքերու համար երկար բարակ խօ-
սիլն աւելորդ է, որովհետեւ մինչեւ հիմա
խօսուածներուն եւ գրուածներուն ո՛չ ոք
կարեւորութիւն տուած է և տրուելիք ալ
չունի : Ամէն նոր հրատարակուած դասագիրք՝
« Ուղի մանկավարժական գրութեամբ, Ի ՇԱՀ
ՀՐԱՏԱՐԱԿՁԻՆ եւ յօդուած դպրոցական ման-
կրան » հրատարակ կ'ելլէ, ու հեղինակին
վարձատրութիւնն ալ գրքին գտնելիք լու-
ընդունելութեան՝ այսինքն շատ ծախուելուն
մէջ կը կայանայ : Եթէ չէք հաւատար, բա-
ցէք ո՛ր եւ է դասագիրք ու կարդացէք յա-
ռաջաբանը :

Մեծ. Հինդլեան էֆ. կ'առաջարկէ նոր
յանձնախումբի մը կազմութիւնը, որ բոլոր
դասագրքերը քննէ եւ արժանի դատածը
միայն գործածել տայ : Կը հարցնենք թէ՛
հիմնական Ուսումնական Խորհուրդին գործը
ի՞նչ է, ինչո՞ւ համար մեր հրատարակած
դասագրքերը Ուսում. Խորհուրդին կը ներ-
կայացնենք քննուելու համար եւ վրան կը

գրենք վաւերացեալ ու յանձնարարեալ Ուսմ.
Խորհուրդէն : Կը հաւատա՞ք, Հինդլեան էֆ.
թէ, հրապարակին վրայ գտնուի դասագիրք
մը, որ վաւերացեալ ու յանձնարարեալ չըլ-
Ուսումն. Խորհուրդէն կամ Կրօնական Ժողո-
վէն, նոյն խկ ուրիշ դասագրքի մը կեղ-
ծերը, օտարազաւանի մը հրատարակած կը-
րօնական դասագիրքը : Հինդլեան էֆ. ինքն
ալ գիտէ որ դպրոցական գրքերը այժմ չա-
հու առարկայ դարձած են, ամէն դասա-
գիրք՝ որու զեղջը հարիւրին 5 կամ 10 ա-
ւելի է ուրիշ նմաններէ, անիկա՝ առդի ման-
կավարժական դրութեամբ յօրինուած եւ ա-
մենէն աւելի ընթացիկ առուստուրի առար-
կան է :

Մեծ. Հինդլեան էֆ. դասագրքերէն յե-
տոյ կ'անցնի դպրոցական մատենադարան-
ներու պէտքին : Գրեթէ ամէն հմուտ ման-
կավարժ այս կէտին վրայ կը ծանրանայ պ-
մէնէն աւելի : Էնթերցումի գիրք մը որ դա-
սագիրք չէ, տղուն աւելի սիրելի կը դառ-
նայ, որովհետեւ բնական բերում մըն է որ
աշակերտը իր դասագիրքը չսիրէ, եւ եթէ
ընթերցումի գիրքը իր նպատակին համա-
պատասխան պատրաստուած է՝ կրնայ շատ
աւելի օգտակար ըլլալ դպրոցականին :

Անձնական փորձի մը անյաջողութեամբ
համոզուած ենք թէ՛ անօգուտ է դպրոցական
մատենադարանի մը հասարակութեան վրայ
խորհիլը :

Ուսումնական Մանկանց Հրատարակչի
Ժամանակին Փոքրիկ Տղու մը Յուշապէսը և
Պահպան Հրէս ակի Պոնցիկը երկու ման-
կական վէպերը՝ պատկերազարդ 250—300
երեսնոց հատորներու մէջ ամփոփեցինք եւ
ՁՐԻ բաժնեցինք թերթին ընթերցողներուն,
յետոյ կարգաւ հրատարակեցինք Դիւցա-
զունք Աշխատութեան, Մանկութեան երեւելի
Արանց, Մեր երկրաւոր բնակարանն եւ իւր
Յօրինիչը հատորները, ամէնքն ալ ճոխապէս
պատկերազարդուած եւ խիստ աժան գինե-
րով, ինչո՞ւ համար մինչեւ ցայսօր գէթ 500
ական օրինակ չապառեցաւ ասոնցմէ եւ փո-
չիներու տակ թաղուած մնացին. մինչդեռ
ատոնց եւրոպական հրատարակութիւնները
տասնեակ հազարներով կը ծախուին :

Հինդլեան էֆ. եւ ուրիշ հրապարակա-
գիրներ, լաւ կ'ընեն՝ փոխանակ այսպիսի
հանդէսներ եւ գրքեր հրատարակել պէտք

է ըսելու, նային, քննեն ու հասկնան թէ՛ անոնց հրատարակուած ատեն ինչո՞ւ քաջալերական ընդունելութիւն մը չըլլուիր. Զարմանալի է արդարեւ որ տարիներ առաջ այսպիսի գործեր հրապարակ կ'ելլէին եւ երբ հրատարակիչը՝ գործին քաջալերութիւն չգտնելէն յուսահատ կը քաշուի, այսօր կ'ելլեն ողբեր ու վայեր կարդալ, որ մեր մէջ տղայոց օգտակար գործեր ընող կը պակսին, եւ օտար ազգերը մեզի օրինակ կը ցցունեն: Արդեօք այսպիսիները 16 երեսէ բաղկացեալ տետրակ մը տպած ու ձրի բաժնա՞ծ են:

Գանք Մեծ. Հինդլեան էֆէնտիի Հանրագիտակի համար ցոյց տուած ուղղութեան մասին մի քանի խօսք ըսել:

Հանրագիտակի նոր շրջանին հրատարակութեան օրէն ի վեր եւ նոյն իսկ դեռ հրատարակուիլ չսկսած, կարգ մը սիրուն յօդուածագիրներ՝ ծրագիրներ ցցուցին մեզ, ճամբայ մը նշանակեցին մեր առջեւ, որպէս զի անոր հետեւինք: Չէինք յուսար որ այդ բազմատաղանդ յօդուածագիրները մեզ այնքան միամիտ կարծէին որ՝ հաւատային թէ՛ մենք մեր դրամագլուխը կը դնենք գործի մը, եւ կը ձեռնարկենք աշխատութեան մը, առանց ընելիքնիս առաջընդէ որոշած ըլլալու եւ ուրիշի մը (գրողներու) խելքին պէտք ունենալու:

Բայց ասկէ աւելի դուարձադին ու ծիծաղելին, քաղաքական օրաթերթի մը՝ իր սխալներուն մէջ մանկական յօդուածներու հիւրընկալութիւնն էր: Սուրհանդակի Պատուական Խմբագրութիւնը դիտելով որ հրապարակի վրայ տղոց համար յատուկ թերթ չկայ, եւ մեր դպրոցականները շատ կը նեղուին կարդալու բան մը չգտնելուն, ուզեց օգտակար ծառայութիւն մը ընել մանուկներուն՝ Քաղաքական լուրերուն տակ պէս պէքի մասալներ գետեղելով: Այդ ատեններ Հանրագիտակի իր առաջին վեցամսեան բոլորելու վրայ էր: Պատուական եւ ուշիմ խմբագիրները չէին տեսներ արդեօք թերթիս մեծածաւալ 16 պատկերազարդ էջերուն պարզուիլն ամէն տասն օրը անգամ մը:

Ասոնց նման ուրիշ խելացութիւններ՝ որոնց պատասխանելու չափ կարեւորութիւն չտուինք, գրեթէ անտես անցան: Բայց Հինդլեան էֆէնտիի յօդուածին պատասխան մը

տալով՝ կ'ուզենք միանգամ ընդ միշտ տալ տիւր քաջընթերցի:

Հինդլեան էֆ. կ'առաջարկէ ծրագիր մը որու գլխաւոր կէտերը արդէն իսկ մեր ծրագրին մէկ մասը կը կազմեն. « Զանազան « տարիքէ տղոց սահմանուած պատմութիւններ, « ներ, ճամբորդութիւններ, առասպելներ, « առակներ, բանաստեղծութիւններ, կեն- « սագրութիւններ, աշխարհագրական, բը- « նագիտական նիւթեր, մասնաւորապէս « աղջկանց յարմար նիւթեր նոր հրապոյր « մը պիտի տային այդ հրատարակութեան: »

Ահա՛ ճամբան՝ որուն հետեւիլ կ'առաջարկէ մեզ Հինդլեան էֆէնտի:

Հոս ակներեւ կը տեսնուի թէ՛ Մեծ. յօդուածագիր էֆէնտին Հանրագիտակի ո՛չ թէ մինչեւ ցայսօր հրատարակուած թիւերը՝ այլ նոյն իսկ մէկ քանի թիւերն անգամ լաւ ուշագրութեամբ չէ քննած, այլ հարեւանցի ակնարկով մը՝ իր վճիռն արձակած է: Կը բաւէր միայն Հանրագիտակի ուրեք մէկ թիւը բանալ եւ պիտի տեսնէր որ զանազան տարիքի տղոց սահմանուած պատմութիւններ եւ կամ առասպելներ չեն որ կը պակսին: Երբ տարւոյն վերջ նիւթերու ցանկ մը պատարասենք, այն ատեն յայտնի կ'ըլլայ անոնց թիւը: Թերթիս օտանաւորները՝ գրեթէ Մ. Թուրեան, Ա. Կ. Կիւլպէնկեան, Ա. Փանոսեան, Լ. Արապեան Ակիւլինէ, Է. Եւայլն անունները կը կրեն. իրաւամբ կը կարծենք թէ ասիկա ամէնէն ընտրելազոյն շրջանակն է, մեր թերթին ուղղութեան յարմար բանաստեղծութիւններ տուողներու:

Հինդլեան էֆ. կրնար վստահ ըլլալ նրմանապէս թէ՛ գիտական նիւթերը պէտք եղածէն գուցէ քիչ մ'ալ աւելի կը գրուին Հանրագիտակի մէջ, մերթ յօդուածի ձեւին տակ և երբեմն ալ գիտական զօրօմանք վերնագրով: Իսկ իր ծրագրին մեզ ցցուցած մի քանի մասերն անտես առնելու պատճառներ ունինք, շատ համոզիչ պատճառներով, որոնք հոս չպիտի բացատրենք, և զորս անձնապէս պարզելու պատրաստ ենք պատ. յօդուածագիրն՝ եթէ փոփաք յայտնէ:

Վերեւ ցցուցածնիս Հինդլեան էֆէնտիի ծրագրին է. իսկ մենք ասկէ զատ միջանակներ բացինք տղոց գրելու եռանդը գրգռելու, մտախաղեր առաջարկեցինք մտքեր-

84

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԴԱՐԱՆԻ ԱՌԱՋ ԳՐԱԴԱՐԱՆ

Թ Է Յ

Թ Է Յ

Թ Է Յ



Ը Ն Տ Ի Ր

Հ Ո Տ Ա Ի Է Տ

Խ Ն Ա Յ Ո Ղ Ա Կ Ա Ն

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ վաճառատունը պատրաստ՝ և թէ օր ըստ օրէ հասնող թարմ և ազնուագոյն տեսակ թէյերով կրնայ այսօր անմրցելի ածանութեամբ գոհացում տալ նոյն իսկ էն խստապահանջ թէյի սիրահարներու: ԵԱՎՐՈՒԵԱՆ և ԻՍԱԳՈՒԼԵԱՆ հաստատութիւնը կը թղթակցի գաւառներու հետ եւ յանձնարարութիւններ կը կատարուին ամենայն ճշդութեամբ:

Աժան, ընտիր ու հօտաւէտ թէյ գործածողներու ջերմապէս կը յանձնարարենք անգամ մը այցելել Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ վաճառատունը, Ճէլալ-Պէյ խանի կից թիւ 10, ուր պիտի գտնեն մեծաքանակ և փոքրաքանակ թէյի ճոխ մթերք մը:

Ա Յ Ա Ն

Ա Յ Ա Ն

Ա Յ Ա Ն

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Տ Պ Ա Ր Ա Ն Ը

Փոխադրուած ըլլալով՝

Կ. ՊՈԼԻՍ, ՊԱՊԸ ԱԼԻ ՀԱՏՏԷՍԻ, ԹԻԻ ՅՏ. ԻԳՏԱՄ ԼՐԱԳՐԻ ԴԻՄԱՑ

Ստացած է տպագրական նոր

կազմակերպութիւններ

եւ կը տպագրէ ամեն տեսակ գիրքեր, ման-

ագիր, հանդեսներ, երգաբերականներ, հարսանեաց հրաւիրագրեր, նամակագրութիւններ, այցաբարդեր, եւ տպագրութեան վերաբերեալ ամեն տեսակ պիտոյքներ: — Տպարանին սեփական 20000 հաւելի պատկերները յանախորդաց տրամադրութեան տակ են ձեռք:

Անմրցելի մաքրութիւն եւ նշանաւորութեամբ

գաւառներէն ալ կ'ընդունի ամեն տեսակ յանձնարարութիւններ:



ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ նոր բացած Շարադրութեան մրցումներն մասնակցողները պարտին սոյն կարոնը կտրելով՝ իրենց գըրութեանց հետ ղրկել Խմբագրութեանս, հակառակ պարագային՝ նկատողութեան չեն առնուիր:

Հանրագիտակ ձեռքէ կը ծախուի Պորտոյ մէջ հաւո 40, իսկ գաշառաց մէջ 50 փարայ: